

ԻՍԱՀԱՎԱԿՅԱՆԻ ԽՈՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ԵՎ ՆԻՑՇԵԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՎԻԿ ԻՍԱՀԱՎԱԿՅԱՆ

Լայպցիգի համալսարանում Իսահակյանի ուսման տարիները՝ 1893-1895 թթ., եզան բանաստեղծի հոգևոր զարգացման ամենաարգասարերը շրջանը: Երիտասարդ Իսահակյանը, իմացության ձեռք բերման իրապես «Ֆաուստյան տենչով» բռնկված, ամբողջ էությունը ընկղմվեց դասական փիլիսոփայության աշխարհը: Համեմատաբար կարճ ժամանակահատվածում նա ուսումնասիրեց և յուրացրեց Հեգելի, Կանտի, Շոպենհաուերի, Նիցշեի աշխատությունները: Նրա առջև բացվում էին ստեղծագործ մտքի նորանոր հորիզոններ: Դարավերջի Գերմանիան, իրոք որ, տրամադրում էր մտասույզ աշխատանքի, բանականության լարման ու հոգևոր մաքառման: Եվ այս հանգամանքները Իսահակյանի համար առաջին հերթին պայմանավորված էին լայպցիգյան համալսարանի (մանավանդ փիլիսոփայական ֆակուլտետի) ընդհանուր մթնոլորտով, ուր դասավանդում էին եվրոպական ճանաչում ունեցող անվանի մի շարք գիտնականներ, ուր ողջ իրականությունը ողողված էր «իմացության ծարավով»: Երիտասարդ բանաստեղծի առաջ բաց էին համալսարանի հարուստ գրադարանը, բաղում ընթերցասրահները և լայպցիգյան նշանավոր գրախանութները, որոնց մշտական այցելուն էր: Եվ, վերջապես, Իսահակյանի անհաղ տենչը իմանալու, քննելու, յուրացնելու մարդկային մտքի հսկաների ժառանգությունը և դրան զուգահեռ հյուսելու խոհափիլիսոփայական հայացքների իր սեփական աշխարհը, գտնելու մտքի այդ վիթխարի շտեմարանի մեջ այն դրույթները, սկզբունքներն ու հենարանները, որոնք թույլ կտային բացահայտել, առաջ քաշել նաև իր անհատականության ծնունդ խոհերն ու դատողությունները, քայլ առ քայլ կերտելով իր անհատական կառույցը՝ փիլիսոփայական ուսմունքների, պատկերացումների հարափոփոխ ու հավերժական օվկիանի մեջ:

Դարավերջը նշանավորում էր մարդկային պատմության մի մեծ, ստեղծագործական նվաճումների իմաստով զորեղ շրջանի ավարտը՝ նորամուտ XX դարի դիմաց, որը պիտի իրավացիորեն անվանվեր տեխնիկայի դար: Այնպես որ Իսահակյանին բախտ վիճակվեց գտնվել եվրոպայում մի շրջանում, որը պիտի համարվեր վերջինը, ուր առաջնային դեր էին խաղում արվեստն ու գրականությունը: Գերմանիան հայրենիքն էր այն ստեղծագործողների, որոնք առավել սիրելի էին Իսահակյանին, մոտ ու հոգեհարազատ էին իրենց արվեստի ուսմանտիկ, հպարտ էությունը, լինի դա գրականություն՝ Գյոթե, Շիլլեր, Հայնե, լինի երաժշտություն՝ Բախ, Բեթհովեն, Վաղներ: Շատ տարիներ անց անվանի արվեստաբան Ռուբեն Ջարյանի հետ զրույցներից մեկում Իսահակյանը հիշել է. «Մի անգամ, շատ տարիներ առաջ, ուսանող ժամանակս, լսել եմ Բեթհովեն, Յոթերորդ սիմֆոնիան: Անընջելի տպավորություն է թողել: Դրան ոչինչ այլևս չհասավ. ինչպե՛ս է գրված և ինչպե՛ս էին նվագում¹: Չես հավատում, որ

1 Իսահակյանը նկատի ունի Լայպցիգի նշանավոր Գեվանդհաուզ (Gewandhaus) սիմֆոնիկ նվագախումբը, որի խմբավարն այդ տարիներին (1893-1895 թթ.) անվանի մանստրո կարլ Ռայնելեն էր:

մարդ է գրել: Մարդկային ուժից վեր է, թվում է, թե մարդ չի ստեղծել, այլ միշտ եղել է, ինչպես բնության հրաշալիքները՝ երկինքը, լուսինը, աստղերը... Վախճանվել էր համայնարանի փիլիսոփայության պրոֆեսորը: Բոլորը սիրում էին նրան, մեծ ցավ էր բոլորիս համար նրա մահը: Համայնարանը ասես միանգամից կորցրեց իր հմայքը: Նրա հոգեհանդուստին էր, որ լսեցի Յոթերորդ սիմֆոնիան: Հիշում եք երկրորդ մասը՝ մահվան քայլերգը... Հանճարի էն աստիճանն է դա, երբ վերացնում է քեզ, ստիպում մոռանալ, թե որտեղ ես, համակում է քեզ իրմով, տանում հետևից: Ես չգիտեմ մի ուրիշ ստեղծագործություն, որ այդպես արտահայտի մահվան կսկիծը, բայց այնքան խոր, որ միաժամանակ հեռացնի հողեկան ցավից... Բարձրացնի, դարձնի փիլիսոփա: Այստեղ է, որ կյանքը հաղթում է մահվան»³:

Իսահակյանի ողորմանտիկ էությունը շատ համահունչ էր Վազների միստիկական-վեհ երաժշտությունը: Ունենալով ընդգծված հակում դեպի փիլիսոփայական-խոհականը՝ Իսահակյանը, հաճախ անձնվեր, մոռացած ամեն կենսական պրոբլեմ, խորասուզվում էր իր նախասիրած փիլիսոփաների հոգևոր աշխարհները: Պրոֆեսոր Ռացերը ծրագիր էր մշակել Իսահակյանի համար, որով վերջինս ղեկավարվում էր փիլիսոփայական պարապմունքների ժամանակ: Մի պարտադիր դասընթաց համընդհանուր փիլիսոփայության գծով նա անցավ Լայպցիգի համայնարանում: Շուտով Իսահակյանի համար նշմարվում են իր մտաշխարհին առավել սիրելի, առավել հոգեհարազատ փիլիսոփաները: Դրանց մեջ պետք է առանձնացնել երկու անուն՝ Արթուր Շոպենհայնի և Ֆրիդրիխ Նիցշե:

Շոպենհայնի անվանը Իսահակյանը ծանոթ էր դեռևս էջմիածնի ճեմարանյան ուսման շրջանից: «Հիշատակարանում» կարդում ենք. «1892, Հունվարի 4. Այս օրերս ես մի տեսակ անորոշ դրություն մեջ եմ գտնվում, մտքերս խառնաշփոթ են, միմյանց դեմ շարունակ կռիվներ են հարուցանում, պատճառը մի քանի գրքերի ընթերցումն է. այս օրերս կարդացի Шопенгауэр փիլիսոփայի կյանքն ու փիլիսոփայության թեորիան: Նա, որպես պեսիմիստ փիլիսոփա, սաստիկ (մի քանի մտքերի կողմերից) դուր եկավ... Ես, իհարկե, սաստիկ պեսիմիստ եմ և ջերմ պաշտպան այդ ուղղությունը. այդպես է պահանջում իմ հոգին: Պեսիմիզմը թվում է ինձ համար ճշմարտություն, իսկ օպտիմիզմը-կեղծավորություն: Պեսիմիզմը արդարև տեսնում է այն, ինչ որ կա, իսկ օպտիմիզմը ոչ... Պեսիմիզմը ճշմարտություն է, բայց անգործունեություն, բայց և կարելի է լինել պեսիմիստ և դարձյալ գործող նպատակ ընտրելով «աշխատել կյանքի վատ կողմերը լավացնել»... Ես շատ կմտածեմ դեռ... բայց իմ բոլոր ցույցերը, հակումները պեսիմիզմին են վերաբերում – թող լինի-ոչինչ... Լինել պեսիմիստ և գործող...»⁴:

Շոպենհայնի, ըստ ամենայնի, առաջին փիլիսոփա հեղինակն էր, որի գործերի հետ ծանոթացավ Իսահակյանը և որը նրան շատ հարազատ եղավ: «Առաջին գիրքը, պատմել է Արամ Ինճիկյանին Իսահակյանը, որ Գերմանիայում ուսանող ժամանակս ձեռքս ընկավ, Շոպենհայնին էր: Ինձ վրա ուժեղ տպավորություն թողեց»: Եվ Գերմանիայում Իսահակյանը կազմում է իրեն անհրաժեշտ գրքերի փոքրիկ ցանկ. «Ես պիտի գնեմ

2 Խոսքը Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր Վիլհելմ Ռոշերի մասին էր, որը մահացել էր 1894 թ. հունիսի 4-ին: Ռոշերը համալսարանում դասավանդել էր 1848 թ., Լայպցիգի պատվավոր քաղաքացի էր:

3 Ռ. Վ. Զ ա Ր յ ա ն. Ավետիք Իսահակյան. Երևան, 1974, էջ 121-122:

4 Ա վ ե տ ի ք Ի ս ա հ ա կ յ ա ն. Հիշատակարան. Երևան, 1977, էջ 31-32 (այսուհետև մեջբերումները կնշվեն տեքստում «Հ» տառով, իսկ էջերը՝ արաբական թվերով):

5 Ա. Ի ն ճ ի կ յ ա ն. Ավետիք Իսահակյան. Երևան, 1977, էջ 226:

այսուհետև այնպիսի գրքեր, որոնք ինձ դասագրքեր լինեն, որոնցից ես միշտ սովորեմ – Շոպենհաուերի, Հարտմանի, Կանտի, Դարվինի, Վուլդի գրքերը» (Հ, 183):

Իսահակյանը բնագրի լեզվով կարդացած լինելով Շոպենհաուերի հիմնական աշխատությունները, գալիս է շատ հետաքրքիր եզրակացությունների. «1895, Մայիսի 14. Ինձ համար պարզ է, որ քրիստոնեությունը տանում է անբժշկելի պեսիմիզմի: Միրելի Քրիստոսը խորը պեսիմիստ էր, ինչպես Շոպենհաուերը խորը քրիստոնյա էր» (Հ, 184): Իսահակյանը նույնիսկ իր ապրելաձևը ուղղում էր մոտեցնել սիրելի փիլիսոփաների կյանքին. «1895, Մայիսի 15. Ոչ մի ժամանակ չպիտի ամուսնանամ ես՝ Նիցշեի, Շոպենհաուերի նման» (Հ, 186):

Վերոհիշյալ փիլիսոփաների երկերը Իսահակյանի հայացքներում առաջ են բերում դեռևս մինչև վերջ չբացահայտված մի շարք դրույթներ, հարցեր, որոնց վրա նա սևեռում է իր ուշադրությունը: Միաժամանակ, նրա հետաքրքրությունը զբաղեցրած այդ հարցադրումները, որոշակի չափով բացահայտում են բանաստեղծի նախասիրությունները փիլիսոփայությունից առարկայի բավիղներում:

«1894, Դեկտեմբերի 12. Հազարավոր շատ դժվար հարցերի հետ ի միջի այլոց պիտի շատ մեծ ուշք դարձնեմ հետևյալների վրա – Ի՞նչ է Նիբվանան – (Oldenberg, “Budda”). Ի՞նչ է կամքը (Schopenhauer). Ի՞նչ է Պլատոնի սերը (Պլատոն, Մանտեդագցա, Դրոմոնոզ). Ի՞նչ է բնագույնը (Harimann). Ի՞նչ է հարգանքը, սերը, ատելությունը, ոգևորությունը... (Spinoza, Leibniz, Spenser, Wundt, Paulsen). Ի՞նչ է «եսը», ալտրուիզմը, էգոիզմը. Ի՞նչ է հոգին, զգացմունքը, միտքը, ցանկանալը (Wundt, Spenser). Ի՞նչ է պոեզիա, էսթետիկա, լոգիկա (Hegel, Vischer). Ի՞նչ է արհեստ, կուլտուրա, Ի՞նչ է բնություն, գեղեցկություն» (Հ, 130):

Իսահակյանի խոհական արձակում կա մի լեզուն՝ «Շի-Հոանգ-Տի Բոգգիխանը», գրված 1907 թ.: Չին մեծ կայսր Ցին-Շի-Հոանը (մ. թ. ա. 259-210) հրամայում է իր մոտ բերել կայսրության մեծագույն իմաստուններին, մտածողներին և պահանջում նրանցից, որ մեկնաբանեն-բացատրեն իրեն. «Ի՞նչու համար է ապրում մարդը, Ի՞նչ է կյանքի նպատակը, որտեղի՞ց օճք դալիս մենք, ո՞ւր ենք գնում մենք, Ի՞նչ է նյութը, Ի՞նչ է ուժը, և Ի՞նչ է ես, և ի՞նչ է նրանք, պատասխանեցե՞ք ինձ: Ասացե՞ք, Ի՞նչ է տիեզերքը, ինչո՞ւ ստեղծվեց նա, ե՞րբ է նրա սկիզբն ու վախճանը, և վերջապես, Ի՞նչ է ժամանակն ու տարածությունը և ինչո՞ւ են դրանք»⁶: Իսահակյան ստեղծագործողին մտատանջել են աշխարհաճանաչման հարցերը: Նա վիթխարի տենչ է ունեցել խորանալ մարդկային մտքի շտեմարանները, անաչել մարդուն, նրա հոգին, անհատականությունը: Ինչպես որ ինքն է վկայում. «1895, Ապրիլի 16. Չմտածող մարդու համար ամեն բան պարզ է. նրա մտքովը չի անցնում «ինչո՞ւ» հարցը... Բայց մեկը, որ մի անգամ դնում է «Ի՞նչ», «ինչո՞ւ» հարցերը՝ նրա երջանկությունը մարում է, և աշխարհը սկսում է գաղտնիքների մեջ... Բայց մտածող մարդու համար երջանկությունը ճշմարտության գտնելն է... Մի անգամ ճամփա մտնողը պիտի շարունակե հասնել նրա վերջին – Նիբվանային... Ուրիշ բան էր, եթե մենք ճամփա չմտնեինք, մնայինք անասուն – հիմար և երջանիկ...» (Հ, 173):

Եվ փիլիսոփայական ուսմունքներով հափշտակվելը, առաջին հերթին, կապված էր մտատանջող հարցերի պատասխանը գտնելու պրոբլեմի հետ: Կարելի է զարմանալ, թե կյանքի ընթացքում Ի՞նչ բազմապիսի, հա-

6 Ա վ ե տ ի ք Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու վեց հատորով. հ. III, Երևան, 1973, էջ 124 (այսուհետև հղումները մեջբերումներին կից, լատինական թվով կնշվի հատորը, արաբականով էջը):

ճախ և ծայրահեղորեն տարբեր ու հակասող ուսմունքներով և փիլիսոփայական ուղղութիւններով է տարվել Իսահակյանը:

Ահա, երիտասարդ Իսահակյանազետ Արամ Ինճիկյանը, 1938 թ. փիլիսոփայական հարցերի շուրջ Իսահակյանի հետ զրուցելիս, խնդրում է նրան մեկնաբանել, թե՛ ինչ ազդեցութիւններ է կրել տարբեր փիլիսոփաների երկերից: Պատասխանը շատ նշանակալից է. «Բուդդան, Շոպենհաուերը ինձ ոգևորել են. նրանց ազդեցութիւնը ես կրել եմ: Դեռ ճեմարանում կարդում էի Շոպենհաուեր: Գերմանիայում առաջին գիրքը, որ ձեռք բերի՝ Շոպենհաուերի «Die Welt als Wille und Vorstellung» («Աշխարհը որպէս կամք և պատկերացում») երկն էր: Պեսիմիզմն առաջ էլ կարիմ մեջ, բայց Շոպենհաուերը հիմնավորեց, թեորիաներ տվեց: Երիտասարդ հասակից ինձ զբաղեցնում էին կյանքի և մահի, անցավորի և հավերժականի, անհատի և հասարակութեան փոխհարաբերութեան հարցերը... Ես ընդունում էի Շոպենհաուերի «Աշխարհն իմ պատկերացումն է» տեսութիւնը» (III, 229):

Ճանաչելու համար Իսահակյանի խոհական հայացքների բնույթը, նրա փիլիսոփայական հետաքրքրութիւնների ընաչընումը, անհրաժեշտ է անդրադառնալ արդեն կյանքի պատկառելի տարիքում արված նրա հետևյալ խիստ կարևոր խոստովանութեանը. «Ինչով չեմ տարվել, ինչ փիլիսոփայական, էթիկական, հասարակադիտական սիստեմներով ազատագրելու տառապող մարդկութիւնը:

Եղել եմ տոյստոյական-նիցչեական, Գերմանիայում, ուսանող ժամանակս՝ սոցիալ-դեմոկրատ: Հուսահատված դարձել եմ անիշխանական, պեսիմիստ: Տարվել եմ Բուդդայով: Ողևորվել եմ հայկական մարտական ազգայնութեամբ, դաշնակցական ոչ երկրորդական գործիչ՝ աշխատել եմ անձնվիրաբար, բանտեր եմ նստել, աքսորվել, փախել հայրենիքից» (V, 312-313):

Այսպիսով, հենց ինքը՝ Իսահակյանը, ընդունել է, որ եղել է նիցչեական, ընդամին, սրան զուգահեռ խոստովանելով, որ եղել է «դաշնակցական ոչ երկրորդական գործիչ»: Եվ սա բնական է, քանզի մարտական ազգայնութիւնը գինվորագրվելը ազգային-ազատագրական պայքարին, այդ պայքարի ողջ բնույթը, իր էութեամբ խորապես ձայնակցում է Նիցչեի ստեղծած հերոսի Գերմարդու իդեալին: Հայրենական ծանր վիճակից ելք գտնելը, պայքարը միաժամանակ երկու խոշոր բունակալութիւնների դեմ, գիմակայումը հարյուրապատիկ անգամ գերազանցող իսլամական տարրին, իրոք որ, հնարավոր էր միայն ինքնագոհ, ռոմանտիկ և հերոսական պայքարի գնով: Հնարավոր էր միայն այն իդեալներով և այն բնույթի հերոսի գլխավորութեամբ, որ առաջ էր քաշում Նիցչեն «Այսպէս խոսեց Ջրադաշտը» գրքի իր բոցաշունչ գաղափարներով, գերմարդու իր կերպարով: Եվ Իսահակյանը, ռոմանտիկ և ըմբոստ երգիչը, հիանալի ըմբռնեց յուրահատուկ կապը Նիցչեի գաղափարախոսութեան և ազգային-ազատագրական պայքարի միջև: Հայ ազատամարտին անհրաժեշտ էր Հերոսը, և Իսահակյանը Նիցչեի մտքերին համահունչ զգում էր, որ ժողովրդին հոգեհոսով է պետք: Հերոս, որ գորու լինի արթնացնել թմբիրից ժողովրդին, հոծ մասսային և տանել դեպի վեհ նպատակը: «Հիշատակարանում» Իսահակյանը մեջ է բերում Նիցչեի մի մտորումը. «Ես վազում եմ դեպի լույսը - արևը, որ ստվերս իմ հետքից գա, որ իմ հետևից դաք դո՛ւք, մարդի՛կ...» (Հ, 185):

Այստեղ մի իրավիճակ է ստեղծվում, եբբ զուգահեռիպում են նախասիրութիւնները թե՛ երիտասարդ բանաստեղծի, թե՛ նրա կուռքը դարձած գերմանացի գիտնականի: Սկզբում, սոսկ բնագրաբար, ապա քայլ առ քայլ խորապես գիտակցված, Նիցչեն սկսում է դառնալ Իսահակյանի խոհերի,

մտորումների տիրակալը. այն մտածողը, որին կարող էր Իսահակյանը կոչել Ուսուցիչ:

Ահա, ինչպես է սկսվում Նիցշեով հափշտակվելը. «1894, Նոյեմբերի 25. Երեկ կատարյալ հիվանդ էի, ամբողջ օրը պառկեցի անկողնում – մենակ էի, մոտս ոչ ոք չկար, ճրագը լուռ վառվում էր. Nietzsche “Also sprach Zarathustra”-ն մոտս էր.– սաստիկ ջերմում էի ու գլուխս ցավում էր, հիշում էի Ապլայիս - անցած կյանքս իր բոլոր մանրամասնություններ, Շուշիկին, մեր սերը, այժմյան դրությունը – տանջվում էի, ուզում էի փչել, արյուն էի ուզում... Բայց անուժ էի ինձ գտնում... աղքատ ու անտաղանդ... սիրտս ճաքում էր, բարձս այրվում... ծա՛նր, ծանր գիշեր...» (Հ, 99):

Իսահակյանին միշտ հետաքրքրել է Արևելքի հին իմաստությունների մեկնաբանումը գերմանական դասական հեղինակների և փիլիսոփաների կողմից, լինի դա Գյոթեի «Արևմտա-արևելյան Դիվանը» պոետական շարքը կամ Օլդենբերգի նշանավոր դիրքը Բուզդաշի կյանքի մասին: Բայց առաջին հերթին, Իսահակյանին գերել են Նիցշեի մեկնաբանությունները Հին Պարսկաստանի կրոնական ուսմունքներից մեկի՝ դրադաշտության հիմնադիր և քարոզիչ Զրադաշտի կյանքի և ուսմունքի վերաբերյալ, այդ իր գիրքը նա անվանել էր շատ սիմվոլիկ ձևով «Այսպես խոսեց Զրադաշտը»: այն դարձավ Նիցշեի ամենահայտնի, և թերևս ամենատարածված երկերից մեկը: Սա բառիս բուն իմաստով սեղանի գիրք դարձավ երիտասարդ Իսահակյանի համար: Ինքը՝ Իսահակյանը, իր նամակներից մեկում այն անվանել է «բանաստեղծական – միստիկական գոհար», որը «շատ հետաքրքիր է յուր տարօրինակ հանճարեղություններ» (VI, 21):

Կարելի է ասել, որ լայպցիգյան ուսումնառության շրջանը Իսահակյան մտածողի համար ընթացել է «Այսպես խոսեց Զրադաշտը» գրքի գաղափարների լույսի ներքո: Այն հանդիսացավ նաև արգասավոր ակունք, որը սնեց Իսահակյանի սեփական փիլիսոփայական կառույցը:

Շատ ե շատ տրամադրություններ, խոհեր, մտքեր, որ հանդիպում ենք Իսահակյանի 1894-1896 թթ. հիշատակարանյան գրառումներում, նամակներում, նախկինում մեզ կարող էին անսովոր թվալ, իսկ ահա լայպցիգիական ուսումնառության շրջանում դրանք կարծես վերածվում են մի կուռ սիստեմի:

Եվ եթե տուճին շրջանում Նիցշեական հայացքները սկսում են սերմեր գցել Իսահակյանի խոհերի և մտքերի մեջ, ապա հետագայում դրանք տանում են րանաստեղծին ունեցող գործողությունների. խոսքը Գերմանիայից հայրենիք վերադարձի շրջանի մասին է: Բերենք «Հիշատակարանի» 1894 թ. գրառումներից մի քանի օրինակ, ուր նկատելի է «Այսպես խոսեց Զրադաշտի» քարոզների շունչը. «Ես ատում եմ, զգվում մարդկանցից – ես ատում եմ, որովհետև նրանց սիրում եմ, ես ատում եմ, որովհետև նրանք իդեալ չունեն...» (Հ, 97): «Մարդկությունը, երբ սոված է ու ճնշված – նրա տրիբունները ազատությունից, իդեալներից ու սիրուց են խոսում, բայց հենց որ հաց են ձեռք բերում – այն բոլոր վսեմ ձգտումները դառնում են խոզություն ու բոզություն ձգտումներ...» (Հ, 89): «Էքստազներ, միայն էքստազներ – սա է վեհ կյանքը, ուր և՛ ժպիտ կա, և՛ արցունք, և՛ վիշա, և՛ ուրախություն, և՛ սեր, և՛ ատելություն...» (Հ, 100): «Ես թեև այժմ մոխրի տակ թաքնված կրակ եմ ու զետնի տակով վազող գետ... բայց շատ շուտով կզարթնեմ ու կվառվեմ. այս մի զինադադար է, մի պատրաստություն է ինձ համար... Ես պիտի մտնեմ մեր կյանքը մի գիսավոր աստղի պես՝ պիտի երգեմ, քարոզեմ, բարկանամ, լամ, վառվեմ... մարդիկ ապրում են իներցիայով, նրանց մեջ կա մի ինքնաշարժ անիվ ու նրանց գլորում է...» (Հ, 107): «Բնություն մեջ նպատակ, դիտավորություն, տենդենց չկա, կա՛ միայն կամք – մի ուժ, որը ցանկանում է այն և անում է

այն, ինչ որ իրեն գեղեցիկ, մաքուր, լավ, գուրեզական է թվում... Ո՛չ մի նպատակ... կամքը բանաստեղծություն է, իսկ փորձաքարը – խելքը՝ այն ուղին, որի վրայով պիտի սահե կամքը – պոեզիան...» (Հ, 117): «Եթե հազարավոր հանճարներ գուրս գան և ուզենան ապացուցել, որ ընկերին ու մերձավորին սիրելը վատ է, անգունություն, անեսություն է, անինքնուրույնություն է – ես չեմ լսեր մինչև անգամ: Ես կսիրեմ իմ ընկերին ու մերձավորին, բայց ո՛չ անպայման, իմ լոգիկան ինձ կառաջնորդե» (Հ, 101-102): «Ի՞նչ արած – աշխատի՛ր, ուրիշին մի՛ տար ու ամբարիբ, որ մարգիկ գան մոտգ ու ոտքերդ լիզեն ու քեզ սիրեն, խնայիր փողերդ – ու երբեք մի՛ կարեկցիր ու մի՛ օգնիր մարդկանց... Սա է միակ միջոցը, որը ես չեմ անելու – ես կթքեմ մարդկանց վրա ու կհեռանամ սարերն ու ձորերը, այրերն ու անտառները...» (Հ, 100):

Թերևս Նիցշեի ուշադիր ընթերցողը Զրադաշտի մասին նրա տրակտատում կհանգիպի համահունչ հատվածների, մտքերի: Անդամ եթե ուղղակի նմանություն չլինի, սակայն, անտարակույս, կան հատվածներ, որոնք թելադրված են Նիցշեի գործի ընդհանուր ոգու և տրամադրության ազդեցությամբ, նմանություն կա հաճախ և գրելու ոճի մեջ:

Հար և նման հատվածներ կարելի է շատ ավելի բերել, բայց կարևորն այստեղ այն փաստի արձանագրումն է, որ հայ երիտասարդ բանաստեղծը զգում է իրեն Նիցշեի խոհերի և մտքերի հետևորդ, զգում է այն աստիճան, որ ինքն իրեն անվանում է «նիցշեական»: Բայց և այնպես, նրանց առավել մոտեցնում է և, սա ունի վճռորոշ գեր, Գերմարդու խնդրը և նրա գերը պատմության մեջ:

Ինճիկյանի հետ կայացած գրույցներից մեկում (1938 թ.) Իսահակյանը արժեքավոր տեղեկություններ է տալիս վաղ շրջանի իր փրկիսոփայական հետաքրքրությունների շուրջ: «Երիտասարդությանս տարիներին տարբեր փրկիսոփայական սիստեմներով շատ եմ տարվել՝ պեսիմիզմ, անարխիզմ... Հափշտակվել եմ Բուդդայով, Շոպենհաուերով, մանավանդ՝ Նիցշեով. մարդկությունը ամեն տեսակ ճնշումներից, տառապանքներից ազատելու ուղիներ էի որոնում: Տենչացել, ձգտել եմ ճշմարտության՝ «իմ կյանքի շեմքից», ինչպես ասել եմ ոտանավորիս մեջ: Ինձ ոգևորում էր Նիցշեի բողոքող, ընդվզող ոգին: Տիրող հասարակության կաշկանդումներից մարգուն ձերբազատելու ձգտումն էի տեսնում նրա մեջ: Բայց ավելի շատ ինձ գրավում էր Նիցշեի լակոնիկ, աֆորիստիկ, կուռ ոճը: Հետո տեսա, որ նրա փրկիսոփայությունը խորթ է իմ հոգուն: Նիցշեի ցանկացած աշխարհը հզորների աշխարհն է: Հերոսների պաշտամունք ես էլ ունեմ, բայց Նիցշեի Գերմարդու գաժանությունը չեմ ընդունում: Նիցշեն իմ մեջ արմատ չձգեց. նա դաժանության փրկիսոփան է: Չէ՛ որ հայ ժողովուրդը դաժանության գոհն է...»⁷:

Բանաստեղծի այս ընդարձակ խոստովանությունը շատ բաներ է բացահայտում: Նախ հիշենք ժամանակը, երբ էր այն ասված. 1938 թ., իսկ ներկայացված էր տպագրության առաջին անգամ 1975 թ. («Գարուն» ամսագիր, 1975, N 10): Թե՛ 1938, թե՛ 1975 թթ. Նիցշեն ընկալվում էր որպես գերմանական Ֆաշիզմի նախահայր, հոգևոր ուսուցիչ, որի ուսմունքը օգտագործել են Ֆաշիզմի գաղափարախոսության հիմնագիրները: Եվ, բնականաբար, այդ շրջանում, առանց «քննադատական» շեշտի խոսել կամ գրել Նիցշեի մասին հնարավոր չէր: Այն ժամանակների գրվածքն այնպիսին էր, որ եթե գրեիր, թե՛ Իսահակյանը եղել է նիցշեական, կնշանակեր որ թույլ էիր տվել կոպիտ գաղափարական սխալ:

⁷ Ա. Ի ն ճ ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 228-229:

Այնպես որ բացերաց խոսել Նիցշեի մասին չէին կարող ո՛չ Իսահակյանը և ո՛չ էլ նրա գործի հետազոտողը: Այս հանգամանքը, սակայն, գրույցի բուն էությունը չի խախտում, իսկ այնտեղ, Վարպետի խոստովանության մեջ կան շատ արժեքավոր տեսակետներ: Նախ, հստակորեն կրկնում է, որ Իսահակյանի հիշատակած երեք փրկիսոփայական ուսմունքները մի գծի վրա են գտնվում, և՛ հեռակա և՛ ուղղակի ձևով կապված են իրար հետ: Հիշենք, թե ի՞նչ մեծ նշանակություն էր տալիս Շոպենհաուերը Բուդդայի ուսմունքին և որ նրա ընթերցանության մշտական առարկան էր Բուդդայի վերարբոյալ գրականությունը: Հիշենք, որ նրա աշխատասենյակում Կանտի կիսանդրի քանդակի հարևանությամբ, մշտապես, գրված էր Բուդդայի արձանիկը: Եվ իր հերթին, Շոպենհաուերը պաշտամունքի առարկա էր Նիցշեի համար, առավել ևս վաղ շրջանի Նիցշեի, որն իր շատ գործերի հիմքում օգտագործել էր շոպենհաուերյան կոնցեպցիաներ, դուլցիաներ: Այսպես, օրինակ, հասարակություն հասկացողությունն ինչ լինելը բացահայտվել է Նիցշեի համար, իր իսկ վկայությամբ, այն բանից հետո, երբ նա ծանոթացել է Շոպենհաուերի նշանավոր «Պրիտչ ասեղնավոր կենդանիների մասին» երկի հետ («ПРИТЧА О ДИКОБРАЗЕ»): Ի դեմս Շոպենհաուերի, Նիցշեն տեսնում էր իր բազում հայացքների սկզբնակետը, զգում էր, որ իր մտածողության արմատները դալիս են Շոպենհաուերի ուսմունքից: Եվ միաժամանակ, նա ձգտում էր Շոպենհաուերի պեսիմիզմից հնարավոր չափով լավատեսական (օպտիմիստական) պտուղներ քաղել: Նրան, իր իսկ խոստովանությամբ, լիցքավորում էր Շոպենհաուերի նշանավոր աշխատությունը՝ «Աշխարհն որպես կամք և պատկերացում» (1819): Նիցշեն մինչև իսկ իր փրկիսոփայական առաջին աշխատություններից մեկն անվանել էր «Շոպենհաուերը որպես դաստիարակ» (1874): Եվ, վերջապես, հիշենք Նիցշեի հայտնի խոստովանությունը. «Աշխարհում երեք բան կան միայն, որ ի վիճակի են ինձ հանգստացնել, դրանք հազվադեպ սփոփանքներ են՝ իմ Շոպենհաուերը, Շումանը և իմ միայնակ զբոսանքները»:

Իսահակյանի հափշտակվելը Բուդդայով, Շոպենհաուերով և Նիցշեով խոսում է այն մասին, որ բանաստեղծի փրկիսոփայական հակումները նույնպես մեր ակնարկած «հոգևոր միասնություն» գծի վրա են գտնվում. պատահաբար չէ, որ համաշխարհային փրկիսոփայական մտքի աշխարհում Իսահակյանն այս երեք անուններն է առանձնացնում: Այլ հարց է, որ երեքից ամենամոտը Իսահակյանին Նիցշեն էր: Եվ իհարկե, ոչ միայն երիտասարդության տարիներին, երբ Գերմանիայում փրկիսոփայի հայրենիքում, տեղի ունեցավ բանաստեղծի առաջին «հանդիպումը» Նիցշեի երկերի հետ: Այն ժամանակ, իհարկե, այդ «հանդիպումը» առավել հուժկու էր ու տպավորիչ, և այդ առաջին գայթակղության ուժն այնքան ուժեղ էր, որ և ողջ հետագա տարիների վրա էլ ունեցավ իշխող նշանակություն: Եվ ամեն շրջանում հայ բանաստեղծի մոտ Նիցշեականությունը ունեցել է իր ընկալումը, իր մեկնաբանումը, իր դերը: Եվ տարիների ընթացքում այն ավելի է զորեղացել:

Նիցշեի մարտնչող ոգին, արհամարհանքը դեպի մահը, ձգտումը ազգի ընտրանի զավակների հերոսների միջոցով հասնել ազգի նվիրական իդեալների իրագործմանը, Նիցշեի ատելությունը ժամանակակից հասարակարգի (իր էությունը բուրժուազուկայական) վերնախավի հանդեպ, ժողովրդին ստրկացնող միջոցները (վարձու աշխատուժ, գործարաններ, Ֆաբրիկաներ), որ ոչնչացնում են անհատին, նրա մոլեգին ձգտումը ազատել մարդու կեղեքումից, շահագործումից, խորապես համահունչ էին երիտասարդ ու արդարամիտ Իսահակյանի տենչերին ու ձգտումներին: Նիցշեի ցասումնալից ոգին նոր հավատ և ուժ էր տալիս Իսահակյանին ազատագրելու օսմանյան լծի տակ ընկած իր հայրենիքը, և անվախ ու

անտրտունը մղելու վե՛հ ու առաքինի պայքար՝ հանուն իր ժողովրդի նվիրական երազի իրագործման: Ահա այս նշանաբանով էին կերտվելու ոչ հեռու ապագայում Իսահակյանի նշանավոր «Հայգուկի երգերը», երբ Իսահակյանը անհրաժեշտ համարեց գիմել իր հայրենակիցներին՝ «Վե՛ր, կաց, ժողովուրդ» բանաստեղծության հետևյալ մարտական կոչով:

– Վե՛ր, կաց, ժողովուրդ, վե՛ր կաց միահամո՛ւն
 Եթե սիրտ ունիս, եթե չես ստոր,
 Եթե զազիր չես դահիճներիդ պես:
 Վե՛հ ազատության դրոշմ կարմիր
 Բարձրացրու հպարտ լեռներիդ վրա.
 Եվ արգարագատ քո սուրբ հանիր
 Գրոհ տուր լպիրշ թշնամուդ վրա.
 Հորիզոններից մինչև հորիզոն
 Եվ փոթորկաշունչ զայրույթով, ըմբո՛ստ
 Փշրի՛ր, խորտակի՛ր դահ ու դայիսոն:
 Մի անգամ մեռիր, քան հազար անգամ,
 Կամ եղի՛ր ազատ, հզոր, ինքնիշխան,
 Կամ բնկի՛ր հպարտ, ձեռքովդ ավերակ
 Բռնապետության բեկորների տակ՝:

Այս բանաստեղծությունը գրված է Լայպցիգյան շրջանից առնվազն տասը տարի անց, բայց միթե այս տողերի մեջ չի նկատվում Նիցշեի ոգին: Բանն այն չէ, որ ուղղակի զուգադիպություն լինի, այլ այն, որ ոգին պահպանվել է: Նիցշեն, մտածողի ողջ էությունը, հիրավի մշտապես դրոշմվել էր Իսահակյանի մտաշխարհում: «Հիշատակարանի» հենց լայպցիգյան շրջանում սկիզբ առած Իսահակյանի բազմաթիվ, ծավալուն խոհափիլիսոփայական բնույթի դրառումները, որոնք նրա օրագրերի 1894-1896 թթ. գերիշխող մասն են կազմում, լավադույնս վկայում են, որ բանաստեղծը Նիցշեի ուսմունքի և մանավանդ նրա վեր հանած Գերմարդու կերպարի ազդեցության տակ, մշակել և զարգացնում էր խոհափիլիսոփայական պատկերացումների իր անհատական ուսմունքը: Խորապես արձագանքելով Զրադաշտի մասին գրքի հեղինակի խոհերին ու տրամադրություններին, այն և միաժամանակ, բնորոշ ձևով կրում է Իսահակյան բանաստեղծի և մտածողի անհատական կնիքը: Մենք տեսնում ենք, թե ինչ հետևողականությամբ և համառությամբ է ընթացել Իսահակյանի համար ճշմարտության որոնումը (տվյալ դեպքում դա հարազատ ժողովրդի ազատության և անկախության երաշխիքների որոնման պրոցեսն էր): Բնականաբար, այդ պրոցեսը չէր կարող սկիզբ առնել ու ավարտվել Գերմանիայում, ուր 1894 թ. բանաստեղծը իրազեկ դարձավ Արևմտյան Հայաստանի՝ Սասունի և Կիլիկիայի շրջաններում խաղաղ բնակչության աննախադեպ ջարդերին: Այդ հիմնահարցը մտավ պատմություն «Հայկական հարց» անվամբ, իսկ հետագայում «Հայ դատ», որը դարձավ բանաստեղծի կյանքի մշտական ուղեկիցը: Գոյություն ունի մի դաժան ճշմարտություն, որ փոքրաթիվ ժողովուրդների քաղաքական ճակատագիրը մեծ պետությունների ռազմատնտեսական շահերի քաղաքական դաշտում չունի և չի էլ կարող ունենալ ինքնուրույն, ավտոնոմ նշանակություն: Նման բնույթի հանդույցների լուծումը ավելի հաճախ քաղաքական դիվիդենտներ է բերում ոչ թե խնդրահարույց փոքր պետությունը, այլ նրա մեծ հովանավորին, իսկ խնդիրը այդպես էլ չի լուծվում... ինչպես որ «Հայկական հար-

ցը՝ ծագած անցյալ դարի վերջերին, մինչև այսօր էլ չունեցավ իր լուծումը:

Ազգային բանաստեղծի ճակատագիրը պայմանավորվում ու միահյուսվում է այդ «մեծագույն հարցի» հետ: Ե՛վ նիցչեականութունը, և՛ Իսահակյանի խոհասփիլիսոփայական պատկերացումների անհատական կառույցը, այդ բոլոր տարիների ընթացքում հանդիսացել է յուրահատուկ հոգևոր հենարան տոկալու, դիմադրելու և հնարավոր ուղիներ գտնելու իր ժողովրդի ապագայի վերաբերյալ:

Լայպցիգյան ուսման շրջանը, առաջին հերթին, նշանակալից եղավ այն ասումով, որ այդ արգասաբեր շրջանում ձևավորվեց Իսահակյանի խոհասփիլիսոփայական հայացքների կուռ կառույցը:

Հայրենիքի ազատամարտիկը լինելու իր վաղեմի ուխտին հավատարիմ Իսահակյանը զդուժ էր, որ ամենամոտր Նիցչեի ուսմունքն էր, քանզի նա էր վեր հանում Գերմարզու կերպարը, որն ըստ Իսահակյանի պիտի տաներ ժողովրդին դեպի ազատության և ինքնուրույնության բազմալի ափերը:

Հարկ է ասել, որ, հետևելով «Հիշատակարանի» գրառումներին, տեսնում ենք, որ Նիցչեի Գերմարզը հանձին Իսահակյանի Հենիի (ГЕНИЙ) ապրում էր իր յուրօրինակ բնաշրջումը: Ահա, ինչպես է պատկերացնում իր հերոսին առաջին շրջանի գրառումներում (1894, դեկտեմբեր) երիտասարդ բանաստեղծը. «Ես պիտի հերոս լինեմ - օ՛, ի՛նչ մեծ ու վեհ զգացմունք, երբ հերոսական գործից - կռվից հետո կրծքիս վերքեր, ճակտիս կնճիռներ, դրսիս ուռու թարմ պսակ՝ ընկերներիս հետ կմտնեմ՝ կվերադառնամ իմ ծննդավայրը... Հերոս լինեմ՝ պսակված ուռու պսակով, մոր դարունքով, Շուշիկի ժպիտով, ընկերներիս համբույրով.- հերոսի գրիչը - ձեռքիս, թուրը՝ մեջքիս, վերքերը՝ կրծքիս, մտքի ու վշտի կնճիռները՝ ճակտիս... - Հերոս, հերոս...» (Հ, 113): Քիչ ավելի ուշ շրջանում. «Հետզհետե մշակում եմ այն տիպը, որ իմ գրվածքում ես պիտի ինձ նկարագրեմ: Ես պիտի իմ մեջ մարմնացնեմ մի հոգի, որին ես պիտի տամ Գերմարզ (Oermensch) անունը: Ի՛նչ պիտի ունենա այդ մարդը: - Գեղեցիկ դեմք, կնճուռ ճակատ, տխուր, բայց փայլող, մարող աչքեր, շրթունքներ որոնց վրա ժպիտ ու անեծք կա... մի կուրծք, որ հեկեկում է ու ոգևորված խփում... մի ճակատ, որ մտքերի տակ այրվում է, մազեր, որոնք արշալույսի ցողերի հետ, քամու հետ ծփծփում են... մի ճակատ, ուր քրտինքը վառվում է...»

Խելոք, մտածող ու քննող, անալիզ անող ու հարցասեր, սկեպտիկ և միշտ մտորող...

Նա պիտի ոգևորվի մահով - Նիրվանայով: Նա պիտի պատվասեր ու ասպետ լինի, հերոս ու դյուցազն, պատերազմում գենքը ձեռքին պիտի մեռնի տանջվողի ու թշվառի համար և պիտի հսկա քարի տակ թաղվի, գինվորների հետ, ուռենու տակ» (Հ, 121-122):

Եվ հետզհետե, այս հարցի շուրջը մտորելով բազմաթիվ փիլիսոփա հեղինակներ՝ Պլատոն, Սպինոզա, Շոպենհաուեր, Մանտեգացցա և այլն (տե՛ս մանրամասն՝ Հ, 130) ընթերցելով, ավելի ու ավելի բնորոշ է դառնում Իսահակյանի պատկերացումը Գերմարզու վերաբերյալ. «Իմ կարծիքով Գերմարզը պիտի ոգևորվի կյանքով ու մահով, այսինքն այն սկզբունքներով, որով սկսվել է, որով պիտի վերջանա, որոնք իր մեջն են և իրեն են վերաբերում: Հերոսը պիտի իր «ես»-ով ոգևորվի, իր «ես»-ի վրա հենվի, նրանով նայե և դատե, նրանով զգա ու մտածե: Հերոսին պատիվ չի բերում, որ մի աղջիկ, մի երգ, մի ժայռ նրան կրակ տա, ապրելու ձգտում, ոգևորութուն... օ՛, հերոսի սիրտը օվկիան է. շատ-շատ դրանք մի-մի ալիք պիտի նրանում շարժեն: Ոչ, հերոսը դրանց կսիրե ու կկարեկցե ու կօգնե, բայց առանց իր «ես»-ի, կամ խորը ինքնագիտակցության ու

ինքնաճանաչողության, ինքնագույություն ու անսխալական կամքի (եթե) միայն նրանցով ոգևորվի - այլևս նա հերոս չէ: Հերոսը կզրկե ողջ տիեզերքը իր կրծքին, կհամրուրե նրա համար, որովհետև ինքը ոգևորված է» (Հ, 130):

Դարավերջին է պատկանում Իսահակյանի արխիվում⁹, մինչև օրս անտիպ, 15 էջանոց կապտավուն տետրը՝ նվիրված Ֆրիդրիխ Նիցշեին և նրա մասին գրված մի ուսումնասիրության: Ինչպես ցույց է տալիս տետրի առաջին էջում, աջ անկյան վերին մասում նշված տարեթիվը, գրառումներն արված են 1898 թ., Իսահակյանի Գերմանիայից վերադարձից 3 տարի անց, երբ նա հրատարակել էր «Երգեր ու վերքեր» անդրանիկ ժողովածուն: Գրառումներն անվերնագիր են, սկսվում են «Նիցշեի փիլիսոփայությունը սա որոշում է...» խոսքերով: Ինչպես ստույգ երևում է դրառումների ձևից, ուսերեն և գերմաներեն լեզուներով բերված բազմաթիվ մեջբերումներից, այս տետրը XIX դարի գերմանացի գրող և փիլիսոփա Լյուդվիգ Շտեյնի «Friedrich Nietznes und ihre Gefahr» (Leipzig, 1893), «Ֆրիդրիխ Նիցշեի ուսմունքը և նրա վտանգները» գրքի հիման վրա արված կոնսպեկտ-հոգված է: Գրքից բերված բազմաթիվ մեջբերումներից և դրանց կողքին արված Իսահակյանի հայերեն թարգմանություններից երևում է, որ այդ գիրքը նա կարդացել է ուսերեն: Սակայն ինչպես հաճախ պատահում է մեծ ստեղծագործողների մոտ, նրանք ուրիշի աշխատանքը կոնսպեկտավորելիս էլ, մերթ ընդ մերթ, առանձին հատվածներում, թե տողերի արտնքում բերում են և իրենց սեփական դատողություններն ու գնահատականները:

Անտարակույս, Լ. Շտեյնի գիրքը ոգևորել է Իսահակյանին, մի որոշ առումով արձագանքել նրա մտքերին, ինչի հետևանքը և այս կոնսպեկտ-հոգված կազմելու գաղափարն է: Սակայն շատ և շատ հարցերում Իսահակյանը, ի տարբերություն Լ. Շտեյնի, այգպես (քննադատական) չէր գրի Նիցշեի մասին, և ոչ էլ կխորանար, ասենք, Նիցշեի փիլիսոփայության և նոր ցինիկների (НЕОЦИНИКИ) ուսմունքի հետևորդների միջև եղած կապի մեջ, չէր կապի, ասենք, Նիցշեի ուսմունքը ստոիկների և գեդոնիստների անվան հետ, ինչպես որ հաճախ անում է Լ. Շտեյնը, և առավել այդ փիլիսոփայական դպրոցների ու Նիցշեի ուսմունքի համադրումից Իսահակյանը լիովին համամիտ է Լ. Շտեյնի հետ, և բերում է հատվածներ, որոնք կարող են հանդիսանալ և իր գնահատականի արգասիքը: Նման հատվածները առավել վերաբերում են Նիցշե-ստեղծագործողի ոճին, նրա խոհական գրվածքների բնույթին, ինչպես և նրա մարդկային խառնվածքին, նաև Նիցշեի նշանակությունը, նրա կատարած դերին փիլիսոփայության պատմության մեջ: Ահա մի հատված նման բնույթի դրառումներից. «Չնայելով, որ ես հակառակ եմ (Л. Штейн)¹⁰ Նիցշեի վարդապետությանը, բայց ասում եմ, որ նրա գրքերը-երկերը համաշխարհային գրականության մեջ պատկանում են ամենանշանավոր և ամենագրավիչ երկերին, իսկ ոճը, լեզուն հրաշալի է, և Նիցշեի տարածման գաղտնիքը այդ ոճի հրաշալիության մեջ է»¹¹:

Այն հանդամանքը, որ այս գրվածքի էջերում 23-ամյա բանաստեղծը վեճի է բռնվում իր պաշտամունքի առարկա փիլիսոփայի շուրջ հայտնված մտքերի հետ, խոսում է նրա խոհերի զարմանալի հասունու-

9 Տե՛ս Ե. Ջարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ավ. Իսահակյանի ֆոնդ (այսուհետև՝ ԳԱԹ, ԱԻՖ), N 1-123:

10 Իսահակյանը փակագծերի մեջ ուսերեն նշում է Լ. Շտեյնի անունը, դրանով իսկ ընդգծելով, որ այս կարծիքը Շտեյնինն է: Հակառակ գեպքում, առանց ազգանվան հիշատակման, կթվար, որ գնահատականը Իսահակյանինն է:

11 ԳԱԹ, ԱԻՖ, N 1-123, թ. 6:

թյան, նրա կուռ բանականության մասին: Գալով Նիցչեի հետ տարվող վիճարանությունը, վերհիշենք Իսահակյանի «Հիշատակարանի» հետևյալ գրառումը. «1895, մայիսի 13: Որքան էլ Նիցչեն ցանկանա կյանքը առողջ և ոգևորված սիրել ու սովորեցնել մեզ, բայց նա երբեք չի մոռանալու, որ կյանքում կան այնպիսի բաներ, որոնք էպպես վատ են և տհաճելի. -ա՛խ, որքան վատ է սիրելիների և իր մահը, սովածությունը - սովը, տուփանքը, (...) սպանությունները, երկյուղը, զղջմունքը...» (Հ, 184): Եվ կրկին, մեկ այլ առարկում. «1895, Փետրվարի 6, Ինձ համար դեռ պարզ չէ, թե ի՞նչ են ուղում ասել Շտիրներն ու Նիցչեն. եթե ամեն մարդ առաջ իր մասին մտածե ու հողա այն ժամանակ ի՞նչ կլինի նրանց ճարը, որոնք զուրկ են միջոցներից» (Հ, 163):

Սրանք, բնականաբար, էական առարկումներ չեն, և չեն խախտում այն մայրուղին, որ կապում է Իսահակյանին Նիցչեի հետ, բայց սեփական կարծիքը նույնպես բարձր կատեգորիա է:

Մեկ ուրիշ հատված գրառումների տետրից. «Նիցչեն անպայման հանճար է (Ըստ Շտեյնի), բայց փրկաստիպության ուղիղ ճանապարհից շեղված, հենց սրա համար պետք է ցավել, որ մարդկությունը կորցրեց մի հանճար...: Բայց Նիցչեն միանգամայն վնասակար է մարդկությանը իր անբարոյական, փչացնող վարդապետությունը, իր կործանիչ, հեղափոխուժող... նրա «Արիստոկրատական և անարխիստական» ինդիվիդուալիզմը հեղափոխության արյունոտ ծնողն է...»¹²: Այս տողերի սկզբնական մասի հետ Իսահակյանն անպայման համաձայն կլինի, բայց հետագա հեղափոխությանը վերաբերող մասի հետ հազիվ թե, հենց «հեղափոխության» «անհատական ընդվզման» տանող Նիցչեի քարոզներն էին ոգևորել երիտասարդ ուսանողի-հեղափոխական Իսահակյանին:

Դժվար է, իհարկե, 1898 թ. արված գրառումների տետրի մեջ գտնել, ջոկել, թե որ հատվածն է Իսահակյանին, իսկ որը Լ. Շտեյնինը, մանավանդ միշտ չէ, որ Իսահակյանը չակերտներ է դնում:

Սակայն ակնհայտ է մեկ հանգամանք, որ կոնսպեկտը կազմելիս էլ Իսահակյանը հայտնում է իր վերաբերմունքը, տեսակետները այնպիսի մի բարդ, խոր և անհատնում վարդապետության մասին, ինչպիսին Նիցչեի ուսմունքն էր: Հաճախ Լ. Շտեյնի գրվածքը հիմք է տալիս կամ ավելի շատ լիցք է հաղորդում Իսահակյանին զարգացնելու իր անհատական տեսակետը «պաշտելի իմաստունի» խոհերի շուրջ: Այսպես, Իսահակյանը բերում է Շտեյնի հետևյալ խոսքերը. «Այնպես, որ Նիցչեն իրավունք չունի ասելու, որ իրեն միտքը դնում է անշուշտ օրիգինալ, առաջ ոչ-ոքին ծանոթ ճանապարհներով», և կողքին անմիջապես գրում. «Բայց որ Նիցչեն աֆորիզմների գրելու մեջ հանճարեղ է.- այդ ես ինքս կապացուցանեմ»¹³: Եվ կամ թե. «Նիցչեն, այսպես ասած, գրականական դինամիտ է, նրա աֆորիզմները մի-մի ուժեղ են, որով նա աշխատում է օղբ ցնդացնել բոլոր մեր կրոնական, բարոյական ու քաղաքացիական, քաղաքական իդեալները, մեր ողջ քաղաքակրթությունը»¹⁴:

Շատ գրառումներ կան Նիցչեի մարդկային խառնվածքի վերաբերյալ և այստեղ ևս զգում ենք Իսահակյանի միջամտությունը շարադրանքին, նրա բառն ու շեշտը. «Նիցչեն բոլորովին ուրիշ անձ է կյանքում, հասարակության մեջ և բոլորովին ուրիշ գրասեղանի առաջ. նա ընտիր հասարակության սիրելի, հարգելի հյուրն է, կանանց զբաղեցնող, նրանց կուռքը, մեղմ, կանացի, քնքուշ, քաղաքավարի, աշխարհիկ, բայց երբ որ գրում է դառնում է մարտնչող, արյունարբու, վիշապաբաղ»¹⁵:

12 ԳԱԹ, ԱԻՖ, N 1-123:

13 ԳԱԹ, ԱԻՖ, N 1-123, թ. 1:

14 ԳԱԹ, ԱԻՖ, N 1-123, թ. 3:

15 ԳԱԹ, ԱԻՖ, N 1-123, թ. 6:

Իսահակյան-Նիցչե առնչությունները ուսումնասիրելիս չպետք է անտեսել այս փոքրիկ, կապտավուն տետրը՝ գրված մի շրջանում, երբ շատ տիրակալ էին Նիցչեի ուսմունքն ու նրա գաղափարները՝ երիտասարդ Իսահակյանի աշխարհայացքի ձևավորման պրոցեսի համար, երբ Նիցչեն կարող էր համարվել թիվ առաջինը Իսահակյանի պաշտելիներին:

Գուցե այս կոնսպեկտը իր ստեղծագործական մշակումներով հետաքայլում վերաճեր Նիցչեի մասին մի առանձին հոդված-ուսումնասիրություն, բայց այդպես չեղավ: Մակայն այս վիճակում էլ Իսահակյանի բնագիրն ունի իր ուրույն արժեքը, և չա՛տ ու չա՛տ հարցերում նրա տեքստը մանրագնին ուսումնասիրելու դեպքում լույս կսփռվի Իսահակյան – Նիցչե խորն ու համակողմանի պրոբլեմին, որի բազում արձագանքները կգտնենք մեկ տասնամյակ անց գրված «Աբու Լալա Մահարի» պոեմի տողերում:

Նիցչեի մասին կոնսպեկտը Իսահակյանն ավարտում է ընդարձակ մեջբերումով, այս անգամ արդեն Նիցչեի մի երկից արված իր թարգմանությունով: «Պետք է լինել Յավայի Lipo Mador բուլսի նման, որ փաթաթվելով կաղնու բնին բարձրանում է վերև, ձգտելով դեպի արևը և վերջը իր թփերով ծածկում է նրա-կաղնու զլուխը և էլի ձգտում... Բարձր... Մարդիկ պետք է լինեն հիմք, պատվանդան, կաղնի Գերմարդերի համար – Lipo Mador – ների համար:

Արիստոկրատիան պետք է ձգտի դեպի առաջ, և երբեք հետ չնայե ոչ թե պետք է հարցնել թե ու բտից կուգաս, այլ ու՛ր կերթաս:

Մարդուն կամքի, ցանկություն համաձայն պետք է գնահատել...

Աքսորվեցեք Ձեր հայրերի երկրից, Ձեր պապերի երկրից, սիրեցեք Ձեր որդիներին և թոռներին երկիրը. և բարիք մատուցեք այդ երկրին: (Որ արժանի լինեք Ձեր որդոց սերին...)»: Եվ այս գրառման տակ նա բերում է իր տետրի եզրափակիչ տողերը. «Հուշատետրերի մեջ, այսպիսի մի բան ունիմ գրած 1895 թվականի մայիսին, Բեռլինում. «Ես թողեցի Եվրոպայի կեղևը և ընդունեցի Հայրենիքիսը, իսկ բովանդակությունը – համաշխարհային»¹⁷:

«Հիշատակարանի» էջերում, այնքան հաճախ երևացող Գերմարդ-Հերոսը, որին Իսահակյանը հաճախ անվանում է «Հենի», ինչպես ուժանտիկ բանաստեղծի կերտած յուրաքանչյուր քնարական հերոս, աներկբայորեն, հիշեցնում է հենց հեղինակի կերպարը: Այս հանդամանքը անկարելի է չնկատել: Եվ մենք հետզհետե կռահում ենք, որ հանձին Հերոսի Իսահակյանը ձգտում է մեզ ներկայացնել իր անհատականությունը մոտ և ներդաշնակ մի կերպար, և այդ պրոցեսում Հերոսը հաճախ Իսահակյանի համար մնում է անմատչելի իրեալ, որին ինքը ձգտում է մոտենալ, նմանվել. «Ես ուզում եմ հերոսներով զարդարել երկրի կուրծքը... Ես ուզում եմ ստեղծագործել հերոսներ, տիեզերքներ... Ես ուզում եմ արծվի պես կանգնել ծովի ափին, ժայռի կրծքին, լեռան գագաթին – երգել խորություն, վշտի, մտորմունքի, ոգևորության և երազների երգեր... Ես չեմ ուզում նստել սոխակի պես վարդի թփին ու երգել տարփանքի երգեր... Ես ուզում եմ արծիվ լինել, ես չեմ ուզում սոխակ լինել – Ես հերոս եմ...» (Հ, 164):

Օ՛, Իսահակյանը լավ էր գիտակցում իր ներքին ուժերը, զգում էր այն անսովոր հուժկու բաբախումները, որ գալիս էին իր էություն խորքերից, զգում էր վիթխարի ներքին կապվածությունը՝ իր պատանի բանաստեղծի և իր ուղեցույց աստղի միջև, որ տիեզերական հեռուներից ճառագում էր ու իր կենսական ուժերը հղում պատանի ստեղծագործողին. «1895, Հունվարի 8. Ես տիեզերքի եզերքն եմ – ես հերոս եմ, ինձնից է

16 ԳԱԹ, ԱԻՖ, N 1-123, թ. 14:

17 ԳԱԹ, ԱԻՖ, N 1-123, թ. 15:

սկսվում ամեն մի ճշմարիտ բան. ես այն ասին եմ, ուր կյանքի խարխիսն է ձգված, այս ասինքն բռնեցեք, ո՛վ մարդիկ, և կտեսնեք լույս ու կյանք:

Հերոսը տիեզերքի եզերքն է - ողջ ալիքները դիպնում են նրան, և նա մնում է ամուր, պայծառ ու կենսատու» (Հ, 154-155):

Ինչպես չհիշենք այստեղ Հենց Լայպցիգում գրված Իսահակյանի ծրագրային բանաստեղծություններից մեկը «Կենսական ծովի հույզերի միջին...», ուր մինչ այդ գրած բոլոր բանաստեղծությունների համեմատ, յավազույնս բացահայտված է նրա մարդկային էությունը:

Կենսական ծովի հույզերի միջին
 Ես ժայռի նման կանգնած եմ ամուր.
 Կայծակն է զարկում իմ վեպ ճակատին,
 Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
 Հողմ ու փոթորիկ շուրջս են հածում,
 Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
 Գոռ ալիքները կուրծքս են ծեծում,
 Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
 Ինձնից բռնեցեք, խորտակվող մարդիկ
 Ես ժայռի նման կանգնած եմ ամուր,
 Ձեր խարխիսները ոտքիս տակ ձգեք,
 Ես ժայռի նման կանգնած եմ ամուր: (1, 40)

Այսպիսի երկը չի կերտվում միայն տաղանդի ուժով, դրա համար անհրաժեշտ է ոգու ամրություն, անսասան հավատ սեփական ուժերի հանդեպ, և նաև ճշմարիտ ըմբռնում իր ով լինելու վերաբերյալ: Այսպիսին էր Իսահակյանի հերոսը և սա ընգամենը 19 տարեկան հասակում, օտար մի երկրում, նյութապես անապահով, սիրեցյալ էակի կողմից սիրտը կոտրած, բայց և միաժամանակ ի՛նչ վիթխարի ստեղծագործական պոտենցիալով էր նա օժտված, ի՛նչ կամքի ուժ ուներ: Եվ սա միայն բանաստեղծական հոգևոր ճիշտությամբ, այլ բանաստեղծի ողջ հետագա կյանքին բնորոշ ճշմարիտ պահվածք:

Նրա կյանքի պատմությունը, նրա մարդկային նկարագիրը եղավ չավազույն վկայությունը 19-ամյա հասակում ազդարարած «Ես ժայռի նման կանգնած եմ ամուր» տողերի իրավացիություն:

Եվ դարձյալ նա դրում է այն բացառիկ ուղու մասին, որն ընտրել էր իր ապագա գործունեության համար, մի ուղի, որն այնքան բնորոշ էր երիտասարդ բանաստեղծի անհատականությանը. «1895, Մարտի 7. Ես ուղում եմ այնպիսի ճամփով գնալ, որ դեռ ոչ ոք չէ գնացել. այդ ճամփան չկա. ես նոր պիտի բանամ, ինձնից հետո էլ պիտի այդ ճամփան կորի: Այդ ճամփով միայն ես պիտի գնամ - այդ ճամփեն մշուշի ու ժայռերի միջով է, ծովերի ու հովիտների, փչերի ու վարդերի, դաշտերի ու անապատների, ցողերի ու աստղերի, երգերի ու վերքերի՝ միջով է...» (Հ, 166):

Յուրահատուկ չափածո տարբերակն է վերը բերված գրառման Իսահակյանի հետևյալ բանաստեղծությունը՝ գրված Լայպցիգից տուն-դարձի ճամփին՝ 1895 թ., հունիսի 10-ին, Վարչավայրում:

Փշե - պսակը ճակտիս կըղնեմ
 Ու ջինջ սրտով ամբոխի մեջ,
 Ու վեհ մտքերով նրա վրեն
 Կըթափառեմ ոլո՛ր-մոլո՛ր
 Երկրի բոլոր ոլորտում...

-Եվ ի՞նչն է իմ նպատակը,-
Աստղոտ, վսեմ ապագան,
Որ վառ, պայծառ կըշողա
Պղտոր կյանքի ափերից
Խորին, կապույտ հեռվում... (1, 47)

Այն գաղափարների ոլորտը, որոնցով տարվել էր Իսահակյանը լայպցիգյան շրջանում, բնականաբար, արտացոլվեց ոչ միայն խոհական գրառումներում, այլև պոեզիայում, և հետագա տարիներին դրանք ավելի ու ավելի խոր արմատներ գցեցին՝ կերտելով նրա պոեզիայի խոհական աշխարհի պատկերը:

Ասացինք, որ Նիցշեի Հանդեպ Իսահակյանի Հայացքները հետևողականորեն կրել են ներքին զարգացում: Արդեն իսկ լայպցիգյան շրջանի վերջին գրառումներում՝ 1895 թ. մայիս և հունիս, շատ բան այլ կերպ էր ընկալվում Իսահակյանի կողմից: Երկու տարի ապրելով Եվրոպայի ամենազարդացած պետություններից մեկում, Լայպցիգի նման քաղաքում, բանաստեղծի առաջ բացահայտվում էին այն զորեղ սոցիալական հակասությունները, որ բնորոշ էին տվյալ Հասարակությանը: Լայպցիգը չէր կարող թաքցնել բանաստեղծից այն պատկերը, որ գոյացած էր նույն ազգի տարբեր խավերի մեջ: Լինելով իր էությունը բնածին ժողովրդական մարդ, հակված լինելով ժամանակի դեմոկրատական գաղափարներին, Իսահակյանը դառնություններ արձանագրում է օրագրում այն գահավեժը, որ ստեղծել էր տիրող հասարակարգը իր և իր հպատակների միջև: Գրառման այդ Հատվածը Իսահակյանն անվանել էր «Իմ ուխտը» (1895, Մայիսի 1): «Ես տեսնում եմ մարդիկ, որոնք աշխատում են զոր ու գիշեր, բայց մնում են անտուն, անքուն, սոված, ծարավ, այլանդակված, հիվանդ և բուսական էակ, անբարոյական: Այս բոլորի պատճառը տնտեսական անարդարությունն է: Նրանք որ չեն աշխատում՝ ունին պայատներ, տասնյակ ձեռք շորեր, թանկագին սեղան... Ա՛խ, պիտի ձաքեցնել կյանքը, պիտի մտցնել աշխատանք և տնտեսական հավասարություն, տնտեսական նիվեո, բայց միշտ և միշտ հենինները, հերոսները, հոգու արիստոկրատները պիտի իշխեն, կառավարեն: Պետք է մտցնել տնտեսական դեմոկրատիա և հոգեկան արիստոկրատիա:

Ես կփչրեմ բուրժուան, պետություն, փող, կղեր, գյուղ ու քաղաք, և կստեղծեմ նոր երկիր, ուր աշխատեն, ուտեն և հողով դեպի վեր սավառեն:

Ահա այսպես՝ ես մարքսիստ և Նիցշեիստ, սոցիալիստ, անարխիստ, դեմոկրատ, արիստոկրատ» (2, 178):

Ի դեպ, հարկ է նկատել, որ Իսահակյանը արդեն լավ ծանոթ էր նաև Մարքսի անվանը և նրա գրվածքներին: Բանաստեղծի «Ուխտը» թույլ է տալիս խոսել փիլիսոփայական տարբեր բնույթի և հակամերժ ուսմունքների վերաբերյալ Իսահակյանի ունեցած յուրօրինակ Հայացքների մասին: Քանզի չկան ավելի մեծ հակադրություններ, քան մարքսիզմն ու Նիցշեականությունը, սոցիալիզմը և արիստոկրատիան: Իսահակյանը փորձում է սրանց միջև նմանություններ եզրեր գտնել, ճիշտ այնպես, ինչպես և Նիցշեն, որը ձգտում էր Շոպենհաուերի հոռետեսության մեջ գտնել լավատեսական տարրեր, որոնք կարձագանքեին իր Հայացքներին: Իհարկե, սա ևս երիտասարդ բանաստեղծի որոնումների շրջանն է, բայց ակնհայտ է մեկ հանգամանք, որ Իսահակյանը միշտ իր ներքին էությունը հակված է եղել դեպի սոցիալական արդարության սկզբունքը: Այս խնդրում ևս, Իսահակյանը հակված էր մտածելու, որ Գերմարդ-Հերոսը կրեթի ընչազուրկ խավերին սպասվող արդարությունը:

Ժամանակի հետ նրա կարծիքը նման Հերոսի ու նրա առաքելությունից վերաբերյալ ավելի էր ամրապնդվում ու կայունանում: Միայն Հերոս-

սր կարող էր իրագործել այդ երազանքները, որ դարեր շարունակ տածել են ամբոխները: Բայց եթե իսահակյանի մոտ կարեկցանք կար, սեր կար դեպի ամբոխը, ժողովրդի հոծ մասսաները, մինչդեռ Նիցչեն արհամարհում էր ամբոխը, գտնում, որ այն անինտելեկտ և իներտ մի տարր է: Այս հանգամանքը ես լավ էր հասկանում իսահակյանը, և իր գրառումներից մեկում յուրովի մեկնաբանում է այս հարաբերակցությունը. «Նիցչեն ատում է պոբելը (գերմ. *probel* - ամբոխ - Ա. Ի.) բայց այս ո՛չ հարստության տեսակետից, այլ հոգու, հարուստն էլ այնպիսի այլանդակ պոբել է, որպես և աղքատը: Աղքատի մեջ էլ կան հոգու արիստոկրատներ, հարուստի մեջ էլ:

— Ես վազում եմ դեպի լույսը - արեւը, որ ստվերս իմ հետքից գա, որ իմ հետևից գաք դո՛ւք, մարդի՛կ...»

Սքանչելի միտք...» (Հ, 184-185):

Թերևս այս մտածելակերպի լավագույն արտահայտությունը եղան իսահակյանի գեղարվեստական արձակում «Արծվամանուկը», «Լեռների հսկան» ակնդորիկ լեգենդները, դրա արձագանքը ինչ-որ չափով կարելի է զգալ «Մասսա Մանուկ», և «Սասմա Մհեր» պոեմներում, այո՛, հսկայական դեր էր իսահակյանը հատկացնում Հերոս - անհատին: Եվ, ի վերջո, ինքն էլ նման բնույթի մի Հերոս էր: Ինչպես ինքն է այդ միտքը հրաշալի ձևակերպել «Հիշատակարանում». «1895, Մայիսի 1. Հենին, հերոսը մի ազդի դիստիլիտ եղած կրիստալն է. նրա մեջ արտացոլվում են այդ ազդի ամեն հատկությունները ավելի խորացած, նույնիսկ նրա մոլորությունները: Մի հերոսը, մի հենին մի ողջ ազգ է, մի ազգի գլուխն է. հենց այդ հիման վրա նա պիտի իշխե և ղեկավարե իր ազգը գեպի իր որոշած իդեալը...» (Հ, 178):

Այնտեղ, հեռավոր Գերմանիայում, ինչքան էլ որ բանաստեղծը կտրված լիներ հայրենի իրականությունից, սակայն նրա խոհերն ու մտքերը մշապես ուղղված էին հայրենիքին: Նամանավանդ այն շրջանում, երբ Եվրոպա հասան Սասունում և Կիլիկիայում տեղի ունեցող կոտորածների մասին լուրերը: Այս ծանր, ողբերգական իրականությունը ավելի է ամրապնդում բանաստեղծի համոզմունքը Արևմտյան Հայաստանում ազատագրական դինյալ պայքար ծավալելու մասին: Եվ սկսնակ հեղափոխական բանաստեղծը, իր ոռոմանտիկ խառնվածքին համապատասխան, ապադա ազատամարտի հաջողության գրավականը տեսնում էր միայն հարազատ ժողովրդի ուժի, տարերքի մեջ և որին պիտի առաջնորդեին Գերմարդի բնույթի Հերոս-անհատները: Տեսնում էր հայ հեղափոխական շարժման մեջ, որի մի մասնակր նաև ինքն էր, երիտասարդ իսահակյանը, այն օրից, որ գինվորագրվեց հայ ազատամարտին: Իսահակյանն իր քաղաքական ծրագրերում յուրօրինակ ձևով շղկապում է հայ հեղափոխական շարժումը Նիցչեի վարդապետության հետ, այդ յուրօրինակ սինթեզի մեջ տեսնելով ապագա պայքարի հաջողության հիմքեր ու ռեալ նախադրյալներ. «1895, մեր գարու նպատակը հեղափոխությունն է - արմատական ու հիմքով... Եվ ես ուզում եմ հեղափոխ(ող) ուժ լինել: Այս ճամփեն երկուս է: մեկը ներքևով՝ երկրի վրայով, մյուսը վերևով՝ երկնքի միջով: Ես ուզում էի և մինչև վերջն էլ կցանկամ վերևի-երկնքի ճամփով գնալ, հեղափոխել կյանքը... Այս ճամփեն շատ դժվար է - պետք է լինել հենի՝ մտածող ու ստեղծող, պետք է լինել գիտնական փիլիսոփա ու բանաստեղծ: Ես ուզում եմ հենի լինել - մարդկության երակը, մարմնացումը լավ իդեալների... Գուցե ես ունեմ հենի սաղմը, բայց միջոց չկա - ազատ երկիր ու փող...»

Ուտի ես ուզում եմ ներքևի ճամփով գնալ - լինել պրոպագանդիստ, զինվոր, ասպետ, տեռորիստ... Ես կմտնեմ հայ հեղափոխական շարժման մեջ և կլինեմ ներկայացուցիչ հայ ժողովրդի՝ ճնշված ժողովրդի իրավունքների ու ապագա իդեալների, բախտավոր և մաքուր կյանքի... Ես վճռել եմ լինել ազգային - հեղափոխական, փշրել տաճկի՝ այսպիսով և

բոլոր տերերի և պարագիտների շղթաներն ու լուծերը... Ես կգնամ ներքևի ճամփով, բայց եթե հարկը գա, եթե ես զգամ իմ մեջ հենի - ես կթողնեմ ներքևի ճամփեն, կթողնեմ հոգու դեմոկրատներին և կթռնեմ վերևի ճամփեն ու կլինեմ հոգու արիստոկրատ... Վեհի թևերով կթռչեմ իդեալին և երկնքի շանթերով կփշրեմ բռնության շղթաները... Կաշխատեմ լինել Բուդդհա, Մովսես, Զրաբաշտ, Քրիստոս, Մահմեդ և Նիցչե, իսկ եթե չկարողացա այդ լինել, կլինեմ բուդդիստ, մովսեսական, զրաբաշտական, քրիստոնյա, մահմեդական կամ նիցչեական... Կմտնեմ գործելու, կտանջվեմ ժողովրդի մեջ, նրա հետ, նրա ցավով, լացով ու վշտով: Օ՛, եթե կարողացա, վերջը կչաչեմ ժողովրդի վրայով - արևի ու ամպի նման...

Այժմ կգնամ ժողովրդի միջով, հետո ժողովրդի վրայով *a la Nietzsche*: Այսպես ես կմտնեմ հայ շարժման մեջ, հայ ժողովրդի մեջ, մարդկային մեծ գաղափարներով տոգորված... կրկնվեմ, կմեռնեմ...

Կեցցե՛ գործը, ուր կա խորը կյանք, իգեա ու զգացմունքներ...

Կեցցե՛ հայն ու մարդկությունը:

Կեցցե՛ Հայաստանն ու տիեզերքը...

Դե՛հ, մնաս բարև, առայժմ, գիտություն, ոիրելի մարգարեներ ու փրկիստիաններ, մնաս բարև, մայրիկ, հայրիկիս շիրիմ, Շուշիկ, եղբայրներ, քույրեր... Ես սլանում եմ ընկերներիս հետ գործի ու կովի դաշտը» (Հ, 189-190):

Այսպիսով, տեսնում ենք, որ նիցչեականությունում տարվելը, զբաղվելը Իսահակյանի համար ինքնանպատակ էր, սահմանափակվող սոսկ իմացական բնույթի հետաքրքրությունների շրջանակով: Նիցչեով հափշտակվելը այն ներքին խորը պահանջն էր, որ իր մեջ գոյում էր ըմբոստ, ռոմանտիկ հոգու տեր երիտասարդ ստեղծագործողը: Դա մի ներքին մղում էր ձերբազատվելու արտաքին աշխարհի խոչընդոտներից և նվիրվելու «վեհ իդեալին», այն էր հայ ազատագրական շարժմանը: Նիցչեի վարդապետությունը հավասարաչափ իր ազդեցությունը թողեց թե՛ Իսահակյանի խոհական աշխարհի ձևավորման վրա, որի անհատական մտածողությունը լավագույն արգասիքը պիտի դառնար «Աբու Լալա Մահարի» պոեմը, թե՛ բանաստեղծի քաղաքական գործունեության վրա, հայրենասերի դժվարին, բայց առաքինի ճակատագրի վրա:

Միաժամանակ հարկ է ասել, որ զգալի ազդեցություն է թողել նիցչեն Իսահակյանի գրելաոճի վրա: Իսահակյանը ինչքան որ հիացած էր նիցչեով որպես մտածող, այնքան և հիացած էր որպես արվեստագետ (բանի գեղագետ): Նրա ստեղծագործական խառնվածքին խորապես արձագանքում էր նիցչեի բանաստեղծական և լակոնիկ, պատկերավոր ու խտացված գրելաոճը: Մեկ անգամ էլ, որ Իսահակյանը հայտնել է իր հիացմունքը այս հարցի վերաբերյալ, քանզի բանաստեղծի համար ոճի, տաղաչափության, երկի կառուցվածքի հարցերը միշտ ունեցել են կարևոր նշանակություն: Ահա նա մտորում է Լայպցիգում իր գրելիք երկերի չափի ու կառուցի մասին. «1894, Դեկտեմբերի 31. Երկու-երեք տունանի, յոթ-ութ վանկանի ոտանավորներով արժե միայն լիրիկական մի զգացմունք, մի պարզ, անպաճույճ, ոչ բարդ զգացմունք հայտնել, օրինակ մի աստղի փայլը երգել, մի կաթ ալցունքը, ծովի ծփանքը, կույսի աչքերը, վշտի դժվարը, ժպիտ-կարճ, թեթև և նուրբ՝ նման Լերմոնտովի “Выхожу один...” կամ “Отворите мне темницу...” կամ Բայրոնի «Շիրիմը» կամ Գյոթեի «Սարերն հանդարտ քնած են» կամ Հայնեի «Warum sind denn die Rosen so blass...» կամ Շահագիրի «Ես լսեցի մի անուշ ձայն», - և այդ ոտանավորներն ես կանվանեմ երգ, որը կերպեմ: Ես երբեք մի երկար միտք, զգացմունք, վիշտ, թախիժ չեմ գրե ոտանավորներով, ինչպես Նագսոնը. ես այդ կգրեմ նիցչեի պես, բայց որքան կարելի է տունների բաժնած, կարճ, ներդաշնակ բառեր ու նախադասություններ այնպես, որ

չատ անգամ, քաղցրության համար՝ հանգերով ու վանկերով վերջանան» (Հ, 149-150):

Նույն շրջանում Նիցշեի մասին իր հոգված-կոնսպեկտում ևս Իսահակյանն անդրադառնում է Նիցշեի հաղվագյուտ ճիրքին՝ արտահայտելու իր մտքերը իմաստուն աֆորիզմների ու ասացվածքների ձևով: Այդ բնագավառում, հիրավի, Նիցշեն մրցակից չուներ:

Իժվար չէ պատկերացնել, թե Իսահակյանն ինչքան էր ոգևորված Նիցշեի աֆորիզմներ ստեղծելու կարողությամբ, նրա իմաստուն, սակայն չափազանց սեղմ ու հակիրճ խոսքով, քանզի ինքը՝ Իսահակյանը, հայ դասական գրողներից, հիրավի, եզակին է, որ հատուկ անդրադարձել է աֆորիզմի ժանրին՝ կերտելով այդ հաղվագյուտ ժանրի բարձրարվեստ օրինակներ, որոնք ինքը անվանում էր խտացումներ: Եվ ղժվար չէ պատկերացնել, թե ինչ մակարդակով Իսահակյանը կթարգմաներ Նիցշեի «Այսպես խոսեց Զրադաշտը» գիրքը, և մանավանդ որ երկար ժամանակ բանաստեղծը փայփայել է այդ միտքը: Առաջին անգամ այդ մտադրություն մասին նա հայտնել է Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերությունը նախագահին՝ 1897 թ. օգոստոսի 5-ին գրած նամակում. «Գալով իմ ուժերիս (...) թարգմանել կարող եմ գերմաներեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներից: Հենց այժմ էլ պատրաստ ունիմ թ. Կարլեյլի կենսագրությունը թարգմանորեն կազմած նրա ղրվածքներից ու կենսագրություններից. ունիմ և ֆր. Նիցշեի կենսագրությունը, Իբսենից՝ «Հետա Գարլեր», Հաուպտմանից՝ «Միայնակ մարդիկ» սքանչելի դրամաները: Իսկ եթե կուզեք, կարող եմ թարգմանել ֆր. Նիցշեի «Also sprach Zarathustra» այս բանաստեղծական – միստիկական դոհարը: Այս «Also sprach Zarathustra» գիրքը շատ հետաքրքիր է յուր տարօրինակ հանճարեղությամբ» (VI, 21):

Այն ժամանակ, ցավոք սրտի, այդ մտահղացումը չիրականացվեց: Անցնում են տարիներ, Նիցշեի գլուխգործոցը հայերեն թարգմանելու միտքը բանաստեղծի ղլխից դուրս չի գալիս: Բայց այդպիսի մեծ ու ղժվարին աշխատանք իրագործելու համար, բնականաբար, հատուկ պատվեր և նպաստավոր սլայմաններ էին հարկավոր, սակայն չկար ոչ մեկը, ոչ մյուսը: Եվ Իսահակյանը քառորդ դար անց՝ 1925 թ. փետրվարի 2-ին, Վենետիկից դիմում է այս անգամ Բոստոնում հրատարակվող ՀՅԴ-ի պարբերական «Հայրենիք» ամսագրի խմբագիր Ռուբեն (Աբտաշես) Դարբինյանին. «... «Հանապազօրյա հացից» ավելի մեծ շնորհ չկա, որ մի մարդ կարող է տալ մյուսին: Մյուս բաները սուտ են, կեղծ են: Քաղցած չի կարելի ապրել: Այդ դու էլ ես փորձել, անշուշտ: Ուստի, սրանով դիմում եմ քեզ, որ մի բան ձեռնարկես ինձ համար – ոչ թե հանգանակություն, երբեք, երբեք, այլ մի բան հանձնես մի հրատարակչական տան կողմից, կանխիկ վճարումով կամ կես-կանխիկ, թարգմանելու: Օրինակ Նիցշեի «Also sprach Zarathustra», կամ Անաթոլ Ֆրանսից, և կամ «Հայրենիք»-ում լույս տեսած պատմվածքներիցս լավերը մի գրքով ամփոփել»¹⁹:

Միայն և միայն կարելի է ավստոսալ, որ հրատարակչները միջոցներ չգտան պատվիրելու Իսահակյանին՝ Նիցշեի գլուխգործոցի թարգմանությունը:

Երբ Իսահակյանը Լայպցիգում էր, մեծ փիլիսոփան ընդամենը հիստուն տարեկան էր, և անգամ կարող էր այնպես լինել, որ Իսահակյանը, ասենք, տեսներ կենդանի Նիցշեին: Սակայն նա արդեն անբուժելի հոգեկան հիվանդությամբ էր տառապում: Իսահակյանը գիտեր, որ Նիցշեն երիտասարդ տարիքում սովորել էր Բոննում, ապա և Լայպցիգի նույն համալսարանում, այս փաստն իր հերթին առավել մոտ էր դարձնում համալսարանն Իսահակյանի հոգուն: Համալսարանի գրադարանում պահ-

19 Ա վ ե տ ի ք Ի ս ա հ ա կ յ ա ն. Նամակներ. Կահրե, 1959, էջ 59:

պանվել էր գրասեղանը, ուր սովորաբար պարապում էր Նիցշեն: Նա հատուկ լսում էր Նիցշեի պաշտամունքի առարկա Ռիխարդ Վագների այն ստեղծագործությունները, որոնք ժամանակին այնպես ոգևորել էին մեծ փիլիսոփային: Եվ գա հազվագյուտ հնարավորություն էր կյանքի մի ինչ-որ շրջան ապրել ու զգալ այն մթնոլորտը, որ ժամանակին ոգևորել ու խանդավառել էր իր կուռքին: Բայց ողբերգության ոգին հավետ անբաժանելի էր Նիցշեից: Նա, մարդկային մտքի հսկաներից մեկը, պետք է հեռանար կյանքից խեղաթյուրված գիտակցությամբ: Իսահակյանը խոր ցավ էր ապրել այս կապակցությամբ, փիլիսոփայի ողբերգական ավարտը ևս գտնում է «Հիշատակարանի» էջերում իր արտացոլումը, մանավանդ Գերմանիայում բանաստեղծն այդ դրամատիկ իրավիճակը ապրել է առավել անմիջականությամբ. «1895 թ., Լայպցիգ. Այսօր մայիսի 9-ին տեսա Fr. Nietzsche –ի խելագար գրություն մեջ նկարված պատկերը... Օ՛, սիրտս ճմլվում, պատռվել է ուզում. ի՞նչ սոսկալի գեմք – ապուշ, հիմար, հիվանդ. սարսափելի է. սիրտս կտոր-կտոր է լինում, ա՛խ, մի՞թե մի հանճար այդ աստիճան կրնկնի... Ա՛խ, Նիցշե, ա՛խ... Մինչև անգամ անատմիական փոփոխությունների է ենթարկվել թշվառ հանճարը: Այն մեծ ճակատը նեղցել, փոքրացել, տափակացել. քներակները փոս ընկել. աչքեր՝ տխուր և անմիտ... Ինքը նիհար ու խեղճ, ողորմելի... Արտաշարժ տեսարան... Ամբողջ տպավորությունը այնքան ճնշիչ է, այնքան սրտաշարժ... Ա՛խ, ի՞նչ է դառել այն արծիվը, առյուծը, *Übermensch* ...Ա՛խ, ա՛խ, աշխարհ...» (Հ, 182):

Ժամանակին Նիցշեն «Այսպես խոսեց Ջրագաշտը»-ի եզրափակիչ հատվածում գրել է. «Կարեկցանք: Կարեկցանք վսեմ մարդու հանդեպ: Ի՞նչ արած: Այդ էլ է եղել ժամանակին: Իմ տանջանքս և իմ կարեկցանքս... ի՞նչ արած: Մի՞թե ես երջանկության եմ ձգտել: Ես իմ գործն եմ որոնել»:

ФОРМИРОВАНИЕ МИРОВОЗЗРЕНЧЕСКИХ ВЗГЛЯДОВ ИСААКЯНА И УЧЕНИЕ НИЦШЕ

АВИК ИСААКЯН

Р е з ю м е

Время учебы в Лейпцигском университете (1893 – 1895 гг.) явилось для Аветика Исаакяна наиболее интенсивным периодом формирования мировоззрения. Здесь он углубился в мир немецкой классической философии. Особое значение в становлении идейных взглядов Исаакяна имело учение Фридриха Ницше. Во многих идеях Ницше, особенно в работе "Так говорил Заратустра", молодой поэт видел возможные аспекты дальнейшего развития армянского освободительного движения. Ведь национально-освободительная борьба народа против деспотии невозможна без романтического пафоса, без накала индивидуального бунта, без героев типа ницшеанского Сверхчеловека. И поэтому в трудах Ницше Исаакян находил философские позиции и проповеди, адекватные своим идеям и воззрениям. Впервые вводится в научный оборот статья-конспект Исаакяна об учении Ницше, написанная в 1898 г.